

ԲԱՆԱԿԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

Ո՞Վ Է «ՆՈՐ ՏԵՏՐԱԿ. ՈՐ ԿՈՋԻ ՅՈՐԴՈՐԱԿ...»
ԳՐՔԻ ՆԵՂԻՆԱԿԸ

Ու. Շ. ՄԵՆՍՈՒԿԻՆՅԱՆ

1773 թ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում լույս տեսավ ժամանակի հայ իրականության համար աննախընթաց և խոշոր երևույթ հանդիսացող մի գիրք, որի խորագիրն է. «ԵՈՐ ԱՆՈՐԱԿ, ՈՐ ԿՈՋԻ ՅՈՐԴՈՐԱԿ...»: Այդտեղ հեղինակը միանգամից բարձրացնում էր հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող մի շարք հարցեր: Նա կոչ էր անում սխալվել միջնադարյան թմրությունից, դիմել համազգային համախմբվածության, ապստամբել թուրք-պարսկական բռնակալության դեմ, թոթափել նրանց ստրկացնող լուծը, ստեղծել հայկական ինքնուրույն պետություն՝ բուրժուա-դեմոկրատական կարգերով և այլն:

Բնականաբար, առաջին իսկ օրերից, այդ գիրքն իր վրա հրավիրեց մեծ ուշադրություն և արժանացավ տարբեր վերաբերմունքի: Էջմիածնի կաթողիկոս Սիմեոն Երևանցին, սաստիկ դաշրացած, պահանջեց հրկիզել այդ գրքի բոլոր օրինակները, ցրել Մադրասի հայկական տպարանը, իսկ գրքի հեղինակին, որպես «դիւարախ» խեղացնորի, բանադրել ու հալածել: Այդպես շվարվեցին կաղարկանները, Հովսեփ Արղունյանը, Գրիգոր և Մակար Մանուչարյանները և ուրիշներ. նրանք բարձր գնահատեցին «Յուրդորակը» և կազմակերպեցին նրա ուսուցանելու հրատարակության գործը, որը, սակայն, իրականացավ զգալի և էական կրճատումներով: Հետագայում հայ պատմաբանները բարձր գնահատեցին այն՝ որպես հայ հասարակական ու քաղաքական մտքի մի կարևոր փաստաթուղթ:

Բայց ո՞վ է նրա հեղինակը:

Մինչև 1908 թ., ուղիղ 135 տարի, այդ գիրքը, առանց որևէ կասկածանքի և վերապահության, ճանաչվեց որպես Հակոբ Շահամիրյանի ստեղծագործություն: Իսկ 1908 թ. սկսած, երբ լույս տեսավ Սիմեոն կաթողիկոս Երևանցու Հիշատակարանը¹, առաջ բաշվեց մի նոր կարծիք, որը գնալով ընդհանրացավ և դարձավ մինչև օրս իշխող միակ կարծիքը: Այն խարսխվեց վերոհիշյալ Հիշատակարանի հետևյալ վկայության վրա. «...դիրքն զայն այն խելացնոր Մովսէսն էր շարագրեալ...»²: Այդ մասին առաջին կարծիքը հայտնեց նշված Հիշատակարանի հրատարակողը՝ Գյուտ րահ. Աղանյանցը՝ հայտարարելով՝

¹ Օրհան հայոց պատմութեան, Քիֆլիս, 1908, հատ. Ը, էջ 576:

² Նույն տեղում:

թե ներկայացվող հատորից «...այն նորությունն ենք իմանում, որ գրքի հեղինակը Հակոբը Շահամիրյանը չէ, այլ թարնված մի ուրիշ անձ—խամսեցի-ղարարադցի Մովսես անունով մեկը»³։ Հետագայում այլևս ոչ ոք չփորձեց խորանալ հարցի էության մեջ և լուրջ փոքրիկ հայտարարություններով մասնագետները գտան, որ «Յորդորակի» հեղինակ պիտի ճանաչել Մովսես Բաղրամյանին։ Այսպես, օրինակ, Թ. Ավդալբեգյանը, ելնելով նույն հիմքից և նկատի ունենալով «Յորդորակի» խորագիրը, ասում է, թե այդտեղ «պարզ գրված է, որ սրա հեղինակը Մովսես Բաղրամյանն է («աշխատութեամբ Մովսէսի Բաղրամեան»)»⁴։ Իսկ Հակոբ Շահամիրյանը եղել է հրատարակողը («տպագրեցեալ ջանիւք և ծախիւք Յակոբայ Եամիրեան»)՝⁵։

Մոտավորապես նույնն է կրկնում նաև Ս. Վ. Տեր-Ավետիսյանը. «Յորդորակի» իսկական հեղինակը պետք է համարել անսլայման Շահամիրյանի որդու դաստիարակ Բաղրամյանին, ինչպես որ այդ մասին նշված է «Յորդորակի» վերնագրում... Հակոբ Շահամիրյանը միայն հրատարակիչն է»⁶։

Խնդրին փոքր-ինչ հանգամանորեն է անդրադարձել Լեոն, որի կարծիքը մեջ ենք բերում ամբողջությամբ։ Ընդօրինակելով «Յորդորակի» խորագիրը, նա գրում է. «Թեև այստեղ պարզ է, որ Հակոբ Շամիրյանը (Շահամիրյանը) միայն տպագրիչ և հրատարակիչ է եղել, բայց մինչև Սիմեոն կաթողիկոսի Հիշատակարանի լույս տեսնելը («Դիւ. Հայ. պատմ.», Ը, 1908) հեղինակ համարվում էր նույն ինքը Հակոբ Շամիրյանը կամ Շահամիրյանը։ Այսպես ենք վարվել և մենք մեր «Հայկական տպագրություն» երկրորդ հատորի մեջ։ Այս շփոթությունն առաջացել էր այն հանգամանքից, որ Հակոբ Շահամիրյանը գրքի վերջում տպված հիշատակարանի մեջ արդեն իրեն է անվանում շարադրող, իսկ Մովսես Բաղրամյանին՝ աշխատակից։ Սակայն Սիմեոն կաթողիկոսի թղթերը ոչինչ կասկած չեն թողնում, որ հեղինակը Մովսես Բաղրամյանն է։ Այստեղից մենք իմանում ենք և մի հետաքրքրական հանգամանք, որ բաց է անում Հակոբ Շամիրյանի անունով գործված կեղծիքը։ Բանն այն է, որ Բաղրամյանը, վախենալով Սիմեոն կաթողիկոսից, ցույց էր տվել այնպես, թե գրողը պատանի Հակոբն է, որ, ինչպես հարուստ մարդու որդի, զերծ պիտի մնար կաթողիկոսի դժգոհությունից։ Սակայն Սիմեոնը շխարվեց և, ինչպես դիտենք, իր ամբողջ բարկությունը թափեց Բաղրամյանի վրա, որին ինչպես էրևում է, անձամբ ճանաչում էր»⁷։

Այս նույն միտքը կրկնել են նաև ուրիշները։ Այս է հարցի ամփոփ պատմությունը։ Սակայն, ինչպես տեսնում ենք, եղած կարծիք-հայտարարությունները խիստ անբավարար են նման մի ծանր խնդիր լուծել ցանկանալու, յոռավել ևս՝ այն լուծված համարելու համար։ Ընդհակառակը, փաստերի հանդամանակից քննությունը թույլ է տալիս վերանայելու այժմ իշխող տեսակետը և նորից «Յորդորակի» հեղինակ ճանաչելու Հակոբ Շահամիրյանին։

Քանի որ Մովսես Բաղրամյանին «Յորդորակի» հեղինակ ճանաչող բոլոր մասնագետների համար հիմք է հանդիսացել Սիմեոն կաթողիկոսի վերոհիշյալ հիշատակարանը, ուստի հարկ կա, առաջին հերթին, ծանրանալ նրա վրա։

³ «Դիւան հայոց պատմութեան», Առաջարան։

⁴ Տեղեկագիր ՀՍԽՀ Գիտ. և արվեստի ինստիտուտի, Երևան, 1930, № 4, էջ 43.

⁵ Երևանի Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», Երևան, 1940, հատ. XIII, էջ 13։

⁶ Լեո, Հայոց պատմություն, III, Երևան, 1946, էջ 1033։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սիմեոն կաթողիկոսը «Յորդորակի» մասին այդտեղ կարծիք է հայտնել ելնելով ոչ թե սովորական բանասերի, ընթերցողի կամ ժամանակակցի անկողմնակալ դիրքերից, այլ՝ պաշտոնական անձնավորության, որն ունեւ հատուկ պարտավորվածություն, նպատակ և դիտավորություն: Այնուհետև, նա իր կարծիքը ոչնչով չի փաստարկել, չի նշել որևէ հավաստի աղբյուր, որն իրավամբ հիմք տար լուրջ եզրակացությունների: Ավելին, նա, ըստ էության, կարծիք էլ չի հայտնել, այլ ուղղակի հայտարարել է, թե «Յորդորակը» սլատկանում է Մովսես Բաղրամյանին: Չմոռանանք նշել նաև, որ Սիմեոն կաթողիկոսի համապատասխան տողերը դրված են ոչ թե իր կողմից, իր ձեռքով, այլ՝ նրա անունից, ուրիշի ձեռքով, ուրիշի խմբագրությամբ:

Այժմ տեսնենք, թե ինչու Սիմեոն կաթողիկոսը այդ գրքի նկատմամբ գրավել էր թշնամական դիրք: Բանը նշանումն է, որ նա, որպես իր ժամանակի հայության հոգևոր առաջնորդ, ելնելով պատմական յրադրությունից և իր համոզմունքներից, դեմ է եղել որևէ հրատարակության, որը կարող էր առիթ տալ կրոնական և քաղաքական վեճերի: Նույնիսկ դեռ այն ժամանակ, երբ նա նոր էր լսել, թե Մաղրասում տպարան է հիմնվել, իսկույն պատվիրել էր զգուշացնել «Շամիր աղային, զի մի գուցէ միամտօրէն այնպէս գիրք տպիցէ, որ ազգիս և եկեղեցւոյս մերոյ վնաս լիցի»⁷: Մի այլ նամակով պահանջել է, որ Շահամիր Շահամիրյանը «Ի տպել տալն զգիրք ինչ, նախապէս ինքեան ծանիցէ և ապա տպել տաղէ», որպեսզի տպվող գիրքը տեղի չտա «ժպտման թշնամեաց: Կամ նորամոյժ և արտուղի բան» շրջանակի, «և կամ թէ զվատարանութիւն և զվտանկարեր ասութիւնս ունիցի առ այլազգական իշխանութիւնն»⁸:

Նվ ահա, հակառակ այս զգուշացումների, նա, դրանից հետո, ստանում է «Յորդորակի» տպագիր օրինակը և նրանում արծարծված մտքերն իրականացնելու՝ ծրագիր-նամակ: Պարզ է, որ նա պիտի սաստիկ զայրանար, որովհետև, ինչպես նրա Հիշատակարան կազմողն է ասում, նրա կանխագուշակած «...վտանգաւոր բանս այժմ... ի գլուխն եկաւ...»⁹: Զայրույթը սակայն քիչ էր. նա, որպես պաշտոնական անձնավորություն, պիտի դիմեր համապատասխան միջոցառումների, որպեսզի արմատախիլ աներ Մաղրասի դրական-քաղաքական օջախը: Ըսկ դա խիստ դժվարին գործ էր, որովհետև նրա դեմ կանգնած էր Շահամիր Շահամիրյանի նման մի ուժ՝ ինչպես իր մեծ հարստությամբ, այնպես էլ իր անձնուրաց հայրենասիրությամբ: Չմոռանանք նաև այն, որ այդ ուժը գտնվում էր հեռավոր Հնդկաստանում և ցանկանալու դեպքում կարող էր շենթարկվել կաթողիկոսին, ինչպես որ հետագայում իրոք եղավ: Սիմեոն կաթողիկոսին մնում էր գործել դիվանագիտորեն: Այդ նպատակով նա տեսական-գաղափարական բոլոր մեղադրանքները բարդում է Մովսես Բաղրամյանի վրա, որն ամենահարմար թեկնածու էր, թե՛ որպես մի թափառաշրջիկ և ընչազուրկ ուսուցիչ, որին սա վաղուց էր ատում, և թե՛ որպես «Յորդորակի» հետ կապված անձնավորություն: Մանավանդ, որ գրքի տիտղոսաթերթին գրված էր «... աշխատութեամբ Մովսիսի Բաղրամեան»։ Ուստի և նա

⁷ «Դիւան հայոց պատմութեան», հատ. Ը, էջ 370:

⁸ Նույն տեղում, էջ 313:

⁹ Նույն տեղում, էջ 573:

բանադրում է Մովսես Բաղրամյանին՝ պահանջելով. «Մի՛ որ հազորդեսցի նմա բանիւ և գործիւ», միաժամանակ սպառնալով. «Եթէ այն դիւարախ շարադրօղն ի ձեռս անկանէ՛ր... զինչ օգուտ, որ ի ձեռս ոչ անկանի»¹⁰: Այսպիսով նա մի կողմից իր ցասումն էր զրսևորում, իսկ մյուս կողմից՝ հնարավորություն էր տալիս Շահամիրյաններին. ցանկանալիս, օգտվել առիթից և Մովսես Բաղրամյանի վրա գցելով մեղքը՝ զաղարկեցնել սկսված գործը: Իսկ իրեն, Շահամիր Շահամիրյանին նա փորձում էր համոզել, որ այլևս չլրագլխի հրատարակություններով և միաժամանակ նրբանկատ եղանակով զգուշացնում. «Ասանկի աչմմ գպատիւդ, խնայելով ի քեզ»¹¹:

Ահա այն հիմնական պատճառը, որն առիթ է սվել Սիմեոն Երևանցուն «Յորդորակի» հեղինակ համարել Մովսես Բաղրամյանին: Ծիշտ այդ նույն զիվանագիտությունը էր, որ նա Մովսես Բաղրամյանին էր համարում նաև «Յորդորակի» հետ միասին առարված նամակ-ծրագրի հեղինակ, որի տակ զրված էին Իրիգոր Խոջաջանյանի, Շահամիր Շահամիրյանի և այլոց ստորագրությունները. «...գիտացէք, զի առաջադրութիւնս այս և շարադրումն զրբոյն ի դիւարախէն յայնմանէ էր յառաջացեալ...»¹²: Նույն միջոցին է դիմում նա հետագայում «Ոռոգայթ փառացի» կապակցութեամբ. «Սիմեոն կաթողիկոսը... Մովսես Բաղրամյանին է համարում հեղինակ և այս զբքի: Բայց ինչպես արդեն մի անգամ նկատել ենք, Բաղրամյանը ոչ մի մասնակցություն չի ունեցել այս գործի մեջ», — գրում է այդ մասին Լեոն¹³:

Պարզ է, որ զիվանագիտական այսպիսի փաստերը բանասիրական խորնգիրներ լուծելու համար հիմք դառնալ չեն կարող: Այլ բան կլիներ, եթե Սիմեոն կաթողիկոսը վկայակոչեր կոնկրետ վավերաթուղթ կամ որևէ փաստ, մի բան, որի մասին, ինչպես նշեցինք, ակնարկ անգամ չկա նրա մոտ: Նկատենք սակայն, որ նման դեպքերում փաստաթղթերն էլ հաճախ անգոր են դառնում, որովհետև այստեղ առկա է ամենահին, ամենահավաստի և ամենահզոր փաստաթուղթը՝ «Յորդորակը»՝ տպագրված և՛ Հակոբ Շահամիրյանի, և՛ Մովսես Բաղրամյանի անմիջական մասնակցությամբ՝ համապատասխան տեղեկություններով: Մնում է հանգամանորեն ուսումնասիրել այդ ամենահին և ամենահավաստի փաստաթուղթը:

Նախքան այդ գործին անցնելը, վերադառնանք վերևում հիշված մասնագետների կարծիքներին: Նրանց բոլորի ելակետը Սիմեոն կաթողիկոսի Հիշատակարանն է. որի օգնությամբ որոշ մասնագետներ, որպես օժանդակ ապացույց, բնագծել են «Յորդորակի» տիտղոսաբերը կամ Մովսես Բաղրամյանի վախի հանգամանքը: Տիտղոսաթերթին կանդրադառնանք քիչ հետո, ինչ վերաբերում է «վախին», ապա դա ևս մի անհիմն պատճառարանություն է: Այդ մասին էլ ակնարկ կա Սիմեոն կաթողիկոսի Հիշատակարանը կազմողի մոտ. «զգիրքն դայն այն խելացնոր Մովսէսն էր շարադրեալ, այլ երկնչելով ի պատճոյ սրբ. վեհին թերես, ոչ իւր անունն էր մակագրեալ իբր շարադրօղ զրբոյն, այլ դանուն Յակորայ որդոյ Շահամիր աղային»¹⁴: Այս պատճառով էլ Քյոնո

10 «Երևան հայոց պատմություն», էջ 550:

11 Նույն տեղում, էջ 577:

12 Նույն տեղում, էջ 576:

13 Լ և ո, Հայոց պատմություն, էջ 1034 (բնագծումը մերն է—Ա. Մ.):

14 «Երևան հայոց պատմություն», էջ 576:

քահ. Աղանյանցը գրքի հեղինակին համարում է «բախնված մի ուրիշ անձ», իսկ Լեոն ալդտեղ տեսնում է կեղծիք, որը կատարել է Մովսես Բաղրամյանը «վախենալով Սիմեոն կաթողիկոսից»: Այս հանգամանքն, անշուշտ, ուշադրավ կլինեն, եթե իրոք այն համապատասխանելու իրականությունը: Մանոթանալով գրքին, տեսնում ենք, որ այնտեղ ո՛չ վախի նշույլ կա և ո՛չ էլ «թաքնված» անձնավորություն: Ընդհակառակը, Մովսես Բաղրամյանի անունը բացեկիցաց նշված է և՛ տիտղոսաթերթի վրա, և՛ հիշատակարանում: Ավելին, տիտղոսաթերթի վրա նույնիսկ այնպես է ձևակերպված, որ որոշ մասնագետներ (Բ. Ավդալբեգյան, Ս. Վ. Տեր-Ավետիսյան և ուրիշներ), ամենից առաջ, հենց այդ պատճառով են նրան համարում հեղինակ: Ավելորդ չենք համարում վերհիշել այդ տիտղոսաթերթը. «նոր տեսարակ, որ կոչի Յորդորակ... և խանդաղատալան տարփանօք տպագրեցեալ ջանիւք և ծախիւք Յակորայ Շամիրեան կոչեցելոյ, աշխատութեամբ Մովսիսի Բաղրամեան հրահանգչին իւրոյ»: Վախից թաքնվել ցանկացող ո՛ր հեղինակը, իր անմիջական մասնակցությամբ, կտուրքեր և կհրատարակեր այսպիսի տիտղոսաթերթ: Իսկ երբ պարզվում է, որ նա այդ գրքի հեղինակն էլ չէ, այլ՝ նրա հեղինակի ուսուցիչն ու օգնականը, վախի հանգամանքն առավել ևս անիմաստ է դառնում:

Եթե անգամ, հակառակ բոլոր փաստերի, մի սլահ ընդունենք, թե գրքի տպագրության ընթացքում Մովսես Բաղրամյանը վախ է զգացել և ցանկացել է թաքնվել, ապա դարձյալ չի կարելի համոզվել, որ այդ նպատակով է շարադրված վերջին հիշատակարանը: Չլիտի մոռանալ, որ այդ գիրքը տպագրվում էր չակոր Շահամիրյանի և Մովսես Բաղրամյանի ջանքերով, նրանք էին և՛ գրաշարը, և՛ էջկապը, և՛ թողարկողը, և՛ այլ տեխնիկական գործեր կատարողը: Եթե նման հանգամանք լիներ, ապա նրանք ոչ թե հատուկ ընդհանակ հիշատակարան կտպեին, որպեսզի նրանով հերքեին տիտղոսաթերթը, այլ ուղղակի կփոխեին տիտղոսաթերթը՝ մեկընդմիջտ ազատվելով նրանից: Այդ դեպքում Մովսես Բաղրամյանի անունը բոլորովին չէր կապվի գրքի հետ: Սակայն, նրանք այդպես չեն վարվել, որովհետև Մովսես Բաղրամյանը ո՛չ վախ է զգացել և ո՛չ էլ ցանկացել է թաքնվել:

Անդրադառնանք խորագրին. պիտի ասել, որ գրքի խորագրի վրա հենվողները լրիվ չեն ուսումնասիրել ոչ համապատասխան բոլոր փաստերը և ոչ էլ անգամ իրենց վկայակոչած խորագիրը: Վերջինս բաղկացած է մի քանի սլարերություններից. գրանցից առաջինը վերաբերում է գրքի կոչմանը («նոր տեսարակ, որ կոչի Յորդորակ»), երկրորդը՝ շարադրման հանգամանքներին («Շարադրեցեալ սակս սթափելոյ երիտասարդացն, և մանկանցն շալկազանց ՚ի վեհերոտեալ և ՚ի հեղգացեալ թմրութենէ քնոյ ծուլութեան»), երրորդը՝ տպագրությանը («Եւ խանդաղատական տարփանօք Տպագրեցեալ ջանիւք և ծախիւք Յակորայ Շամիրեան կոչեցելոյ, աշխատութեամբ Մովսիսի Բաղրամեան հրահանգչին իւրոյ») և այլն: Այստեղից պարզ երևում է, որ շարադրման հանգամանքներին վերաբերող սլարերության մեջ ոչ մի խոսք չկա գրքի շարադրողի մասին: Այդտեղ, այդ խնդրի վերաբերյալ, զիտավորյալ կերպով սլահ-պանված է լուծվում. այնպես «Շարադրեցեալ» բառից անմիջապես հետո (կամ սլարերության վերջում) կնշվեն հեղինակի անունը: Ինչ վերաբերում է Մովսես Բաղրամյանի անվան հիշատակմանը, ապա դա արված է Տպագրությանը հատկացված սլարերության մեջ, այն էլ չակոր Շահամիրյանի անունից հետո: Այդ սլարերությունն ասում է, որ տպագրությունը տեղի է ունե-

ցել Հակոբ Շահամիրյանի ջանքերով, ծախսով և Մովսես Բաղրամյանի «աշխատութեամբ», այսինքն՝ աշխատակցությամբ, մասնակցությամբ, օգնությամբ: Խորագրի վրա հենվող վերոհիշյալ մասնագետները փոխանակ այսպես մոտենալու խնդրին, վերցրել են լուր տպագրությանը վերաբերող պարբերությունը և այն ներկայացրել որպես թե՛ տպագրության և թե՛ շաբաղման հանգամանքների մասին գրված վկայություն: Ավելին, Թ. Ավդալբեգյանը նույնիսկ տեղափոխելով այդ պարբերության երկու մասերը, այնպես է ներկայացնում, որ իբր այնտեղ նախ նշված է Մովսես Բաղրամյանի, ապա Հակոբ Շահամիրյանի անունը (տես վերևում):

Դրքի խորագրից արված վերոհիշյալ եզրակացության սխալ լինելն առավել հստակ է երևում, երբ մենք քննության ենք ենթարկում նաև այդ գրքի հատուկ հիշատակարանը՝ նվիրված գրքի նեղիմակիին ու նրա տպագրությանը մասնակցողներին: Այդտեղ շատ մանրամասն և շատ որոշակի կերպով ասված է, որ, իրոք, գրքի խորագրում (տիտղոսաթերթի վրա) ղիտմամբ չի նշված գրքի հեղինակի անունը, որպեսզի դա չհամարվի անհամեստություն: Այսպես ասված է, որ գրքի հեղինակն է ինքը՝ պատանի Հակոբ Շահամիրյանը: Այնուհետև նշված է, թե գիրքը տպագրվել է Հակոբ Շահամիրյանի ջանքով, ծախսով և Մովսես Բաղրամյանի աշխատակցությամբ՝ «զոր և կանխագույն ի նախերգանսն (այսինքն՝ խորագրում, տիտղոսաթերթին) յիշեցի»: Քանի որ քննարկվող հարցը մեր բանասիրության համար կական նշանակություն ունի, իսկ այդ հարցի լուծման գործում ամենաախճական խոսքը պատկանում է նշված հիշատակարանին, ուստի հարկ ենք համարում ընդարձակ հատվածներով մեջ բերել այն, մանավանդ, որ «Յորդորակը», որպես հնատիպ գիրք, դժվար է ճարվում:

Այդ հիշատակարանում հեղինակը, գիմելով ընթերցողներին, ասում է. «Վասն զի յազնուութեան ձերումդ սպասու հարկեցեալ զհայրենեաց տենչիւ փարօղս՝ յետնորդ և քան զամենեսեան կրսերագոյն և ապիկար պատանիս և արբանեակս Հայոց մեծաց, յայտ և զայս կացուցանել, զի զշարադրող և զտպագրող տետրակիս գիտացեն, զոր ոչ զինքն յիշատակել ի նախերգանսն ճահ վարկեաց: Զի մի՛ հաւասար նոցա ընդ բանիբուն շարադրողաց կարգսն զրեցեալ այնու համարիցի. այլ ըստ իրումն նուստութեան՝ պահելով զնոցին պատիւն՝ զոր ունի յար և մտի, որ և գնա հարկեաց հուսկ յետոյ յաւարտ տետրակիս յիշել. և երեիլ ի մէջ շարադրողաց նախահարց իբրև զնոցայն յոտից թոթափեալ փոշիս՝ և անկեալ առաթուր ամենեցունցն. այսինքն և Յակօր նոր Զուղայեցի՝ որդի Շահամիրի՝ սրղոյ Սուլթանումի՝ որդոյ Դաւութխանի՝ որդոյ Շահամիրի՝ սրղոյ Մուրատնանի Շահամիրեանց կոչեցելոյ, ի քաղաքէն նախիջեանու, յաշխարհէն Վասպուրականի Հայոց մեծաց: Զոր մեծն Շահարաս վտարեաց յաշխարհն Պարսից. և բնակեցոյց ի մեծ զեօղաքադաքն՝ նոր Զուղայ կոչեցեալ, ի գաւառին Ասպահանայ: Տես զայսման և ի 188. և ի, 197. թղթահամարսն»¹⁵: Այնուհետև հեղինակը պատմում է, թե ինչպես իրենք նոր Զուղայից, շատ-շատերի նման, տեղահան լինելով, եկել և հաստատվել են Հնդկաստանում. «Իսկ զկնի ժամանակաց, իբրև յաճախեցան սաստկացան խիստ՝ խիստ յոյժ աղմուկ շփոթին և խոռովութեան յաշխարհին Պարսից ամե-

¹⁵ «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ...», Մաղրաս, 1772—1773, էջ 218 (կետադրությունը պահպանված է նույնությամբ):

նուստ. ըստ որում և ի, 190. թղթահամարն յայտ է դոյզն ինչ. որովք երկիրն սկսաւ օր քան զօր ամայանալ, և հարուածահար բնակիչքն լինիլ ի ձեռն ամենի և անագորոյն բռնաւորացն: Ուստի յոգունց խոյս տուեալ՝ հազիւ թէ մազապուրծ լեալ անկանէին ի տար աշխարհ թափառիլով. որպէս և մեք մի իսկ եմք ի նոցունց, անկեալ յաշխարհն Հնդկաց. և ուր մինչև ցայսօր եմքս իսկ»¹⁶: Եթե անգամ այստեղ հատկապես և այնքան մանրամասն նշված չլինէր, թե այս գրքի հեղինակը Հակոբ Շահամիրյանն է, դարձյալ այս կենսագրականով նա՛ կճանաչվեր գրքի հեղինակ և ոչ թե Մովսես Բաղրամյան Ղարաբաղցին:

Այժմ լսենք նորից Հակոբ Շահամիրյանին, որը շարունակութեան մեջ ասում է. «Աստանօր խորհեցեալ իմ, զօգուտ ինչ ըստ իմումս հիքութեան առնել անձկացեալ ազգին մերում. ոչ այլ ինչ քան զայս բարեգոյն մարթացի հայթհայթել ըստ իմս վարկին. գոր ըղձակերտեալ իմ մեծաւ ջանսիւ և անհանգիստ աշխատութեամբ»¹⁷: Այնուհետև նա նշում է, թե ինչպես վերջացրեց իր գործը և հասցրեց նրա տպագրութիւնը՝ իր միջոցներով, մեծ ծախսով և Մովսես Բաղրամյանի աշխատակցութեամբ. «կոչեցի զհոգին Սուրբ Աստուած, որ եկն եհաս՝ առողանելով զսլասքեալ... անդաստան... բաղձանացն իմոց. և զիս ուրով կազդուրեալ զօրացոյց, մինչև ընդ լրումն այսքանիք զայս զօրեցի հասուցանել իմովք արդեամբքն և ծախսիքն, հանդերձ աշխատակցան իմով՝ այսինքն է Մովսէս Բաղրամեանն, զոր և կանխագոյն ի նախերգանսն յիշեցի...»¹⁸: Եվ եթե խորագրում Մովսես Բաղրամյանի մասին առկա է «աշխատութեամբ» բառը, ասլա այստեղ գործածված «աշխատակցան» բառը գալիս է նրա միտքը պարզելու: Այդ երկու բառն էլ նույն իմաստով են օգտագործված: Այսօր է, որ աշխատակցութիւն և աշխատութիւն ձևերը առանձնահատուկ նշանակութիւն են ստացել: Հնում «աշխատութեամբ» նշանակում էր ոչ թե հեղինակութեամբ, այլ, առաջին հերթին, աշխատանքով, ջանքով, ճիգով, տառապանքով, նեղութեամբ՝ ինչպես տեսնում ենք Հայկազյան բառգրքում: Եթե անգամ սլարովի, որ այն ժամանակ նույն հնդկահայերը այդ բառը նաև հեղինակութեան իմաստով են գործածել, ասլա դարձյալ տվյալ դեպքում այն հեղինակութեան հետ կապ չունի: Այդ են ասլացուցում հիշատակարանի վերոհիշյալ տողերը և նրանց համասլատասլխանող տիտղոսաթերթը:

Ավելացնենք նաև, որ բառային խիստ, մասնագիտական նրբութիւնների սլահանջ շենք էլ կարող ներկայացնել Շահամիրյանների հրատարակութեանը, որովհետև նրանք իրենք են ներողութիւն խնդրում հենց դրա համար, ասելով. «Քանդի և մեք իսկ ո՛չ զսորին յոգնախուտն սլաւանսն ժխտեմք. որ եթէ յանյարմար շարադրութիւնսն. եթէ յառողանութիւնսն, որ ի վթար արտաբերմունս տառից, վանկից, բառից և բանիցն...» և այլն¹⁹: Հիշենք հենց հիշատակարանի այն դարձվածքը, որի համաձայն «նախերգանք» է կոչվում գրքի խորագիրը: Եթե այդ «նախերգանքն» ընկալենք այսօրվա իմաստով, ասլա սլիտի ընդունենք, որ գիրքը սլակասաւոր է, որովհետև այնտեղ հատուկ նախերգանք չկա, որտեղ առկա լինէր Մովսես Բաղրամյանի անունը: Բայց այդպես վարվել շենք կարող:

¹⁶ «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ...», էջ 218—219 (անմիջական շարունակութիւնն է):

¹⁷ նույն տեղում, էջ 219:

¹⁸ նույն տեղում (ընդգծումը մերն է—Ա. Մ.):

¹⁹ նույն տեղում, էջ 211—215:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ոչ Սիմեոն Երևանցին և ոչ էլ նրա Հիշատակարանի վրա հենվող մասնագետները չեն տալիս քննադատության դիմացող որևէ փաստ, որպեսզի նրա հիման վրա «Յորդորակը» ճանաչվեր Մովսես Բաղրամյանի գրչի արդյունք: Ընդհակառակը, իրենք, այդ զիրքը տույզերով ենը՝ Հակոբ Շահամիրյանը և Մովսես Բաղրամյանը նույն «Յորդորակի» հիշատակարանում պարզորոշ մանրամասնությամբ բնորոշում են, որ այդ գրքի հեղինակը Հակոբ Շահամիրյանն է: Իսկ դա եղած փաստերից ամենահինն ու ամենահավաստին է, որին չհավատալ չենք կարող:

Այս կապակցությամբ խիստ ուշագրավ է նաև հետևյալ փաստը:

Ինչպես գիտենք, «Յորդորակը» բաղկացած է յոթ գլուխներից, որոնք կազմում են մի կուռ ամբողջություն: Այդ գլուխներից առաջին 4-ը գրված են ռոտանովորով. իսկ վերջին 3-ը՝ արձակ: Ահա այդ գլուխներից մեկում պահպանված է հեղինակի անունը, որը ցարդ նկատված չի հղել²⁰: Խոսքը վերաբերում է «Փյուխ Երրորդին» (էջ 44—46), որը շափածո է և գրված է ակրոստիքոսով: Հեղինակն այստեղ, իր մտքին օժանդակ տեղեկություն տալու նպատակով, հետևել է մեր միջնադարյան պոեզիայում այնքան շատ տարածված և գործնական նշանակություն ունեցող ակրոստիքոսին: Ըստ բրում, նա վերջերել է իր անվան և ազգանվան տառերը, մեկընդմեջ շարադասել և դրանք դարձրել հիմք՝ բանաստեղծության տներին: Ստացվել է «Յ, Շ, Ա, Ա, Ա, Մ, Ս, Ի, Բ, Բ, Ս, Ա, Ն, Ե» շարքը, ուր բավականին զժվարությամբ նշմարվում են «Յա-կօր Շամիրեանե» բառերը: Այս փաստն արդեն ոչ մի կասկած չի թողնում «Յորդորակի» իսկական հեղինակին ճանաչելու հարցում: Սակայն ավելորդ չենք համարում վկայակոչել նաև մի քանի ուրիշ տվյալներ:

Հակոբ Շահամիրյանի վաղաժամ մահից (1774, հուլիս) շատ շանցած, այն է՝ 1775—1776 թվականներին, նրա փոքր եղբայր Եղիազարի և նույն Մովսես Բաղրամյանի ջանքերով լույս է տեսնում «Պատմություն մնացորդաց հայոց և վրաց...» երկը, որի առաջարկում Եղիազար Շահամիրյանը գրում է. «...լուսատրեալ հողի եղբայրն իմ աւագ Յակորոս Շամիրեանն բնդ սոյն և բնդ այսպիսի երկս ջանս եղեալ յամենայն գորովենէ իւրմէ բնդ ամենայն ժամանակս կենաց իւրոց յաւտ անձամբ անձին նկրտիւր առ ի յօղն ինչ մերագնէից»: Այս արժեքավոր վկայությունից իմանում ենք, որ Հակոբ Շահամիրյանն իր գիտակցական ողջ կյանքը, անսպառ եռանդով, նվիրարհրել է գրականությանը՝ հայրենիքին ծառայելու նպատակով: Ըստ որում նա գրադավել է նաև «Պատմություն մնացորդացի...» ռուսումնասիրությամբ: Այնուհետև, Եղիազար Շահամիրյանը նրա մասին գրում է. «Բայց ոչ բաւեալ կենօք առ ի զիղձ լցուցանելոյ յարատենչ ըղձակերտութեան յազազս օրհասին մահու կանխելոյ. այլ յառոյց և յերիտասարդական տիս փոխեալ ի կենաց աստի առ արարիչն իւր, զիւրն թողլով յիշատակութեան արժանին գտետրակ իմն՝ յորջորջեալն Յորդորակ...»: Այսինքն, սակայն նա, Հակոբ Շահամիրյանը, ժամանակ չունեցավ իր նպատակներն ամբողջապես իրագործելու, որովհետև վաղաժամ հեռացավ կյանքից՝ թողնելով իրեն արժանի հիշատակ «Յորդորակ» կոչվող զիրքը:

²⁰ Այդ մասին, առաջին անգամ, ամփոփ հաղորդում ենք արևի Հայկական ՍՍԻ ԳԱ «Տեղեկագրի» (հաս. գիտ.) 1958 թվականի № 5-ում (էջ 93—94):

Հնդկահայ գործիչ Հակոբ Սիմոնյան Այուրջանցը, որը շատ լավ գիտեր Շահամիրյաններին և 1780—1783 թվականներին աշխատել է նրանց տպարանում²¹, իր մատենագիտական մի ուսումնասիրության մեջ Հակոբ Շահամիրյանին է համարում «Յորդորակի» հեղինակը. «...Յակոբ Շամիրեանէ ջուղայեցոյ պատմագիրք Յորդորակ, յորս զոն պատմութիւնք... զոր տէր աստուած փարձատրեսցէ...»²²:

Հիշենք նաև 1786 թ. Պետերբուրգում ուսերեն տպագրված «Յորդորակի» համառոտ թարգմանությունը՝ դարձյալ Հակոբ Շահամիրյանի անունով. «Сочинитель предлагаемой истории господина Шамиров»²³.

Հարցն ունի մի այլ կողմ ևս: Ինչպես գիտենք, «Յորդորակը» լույս տեսավ 1773 թ. առաջին կիսամյակում և նրանից մի օրինակ անմիջապես առարվեց Սիմեոն կաթողիկոսին, որն առանց հապաղելու անիծեց գրքի հեղինակին և բանադրեց նրան: Անկախ այն հանգամանքից, որ կաթողիկոսը իր թույնն առերես թափում էր Մովսես Բաղրամյանի վրա, ըստ էության, թե՛ անեծքը և թե՛ բանադրանքը ուղղված էին գրքի բուն հեղինակին: Դժբախտ զուգահիշությունը հենց այդ ժամանակ էլ, այն է՝ 1774 թ. հուլիսին մահանում է Հակոբ Շահամիրյանը: Հասկանալի է, որ այս իրադրության մեջ, եթե որևէ կեղծիք կար, բնականաբար, պիտի երևան դար: Մովսես Բաղրամյանը կամա թե ակամա պիտի խոստովաներ, որ ինքն է հեղինակը, որպեսզի պատանի Հակոբի հիշատակը մարդկեր անուղղակի անեծքից: Ավելին, եթե հեղինակը Հակոբ Շահամիրյանը չլիներ, նրա հայրը, գեթ որպես հավատացյալ, կարող էր անգամ դժտվել Մովսես Բաղրամյանի հետ և ավելի քան հանգամանորեն ցրել իր վաղամեռիկ որդու անվան հետ կապված «կեղծիքը»: Բայց իրականում այդպիսի բան տեղի չի ունենում. ընդհակառակը, այնուհետև էլ թե՛ Շահամիր և Եղիազար Շահամիրյանները, թե՛ Մովսես Բաղրամյանը և թե՛ ուրիշները Հակոբ Շահամիրյանին են ճանաչում «Յորդորակի» հեղինակը:

Որ Հակոբ Շահամիրյանն է «Յորդորակի» հեղինակը, այդ մասին անուղղակի կերպով վկայում է նաև նրա տապանագիրը: Նրա մահից հետո շարագրված այդ չափածո արձանագրությունը, որպես անկեղծ ու նվիրական զգացմունքների արդյունք, չէր կարող պարունակել որևէ կեղծ տոն: Իսկ այնտեղ կարդում ենք.

Ողջոյն ընդ բեզ, դամբարանիս տառն ընթերցող,
Տուր ինձ լուրն ազատութեան ազգի իմոյ, որ եմ տենչող.
Եթէ յարեալ ի մէնջ ոմն մեզ փրկիչ և կառավարող,
Ընդ որ յաշխարհի յաւէտ էի յոյժ ցանկացող,
Ես Յակորոս ի Հայոց մեծաց ի նախնեաց յառաջ եկող...

Այսինքն՝ ո՞վ դամբարանիս այցելու, ասա, ազատագրվե՞ց արդյոք իմ ազգը, մեզանից մեկը զուրս եկա՞վ, որ կարողանար մեզ փրկել և կառավարել. երազներ, որոնց միշտ ձգտել եմ ես իմ կենդանության ժամանակ: Իր

21 Հ ա ն ու ե, Պատմագրութիւն վարուցն և գործոց նազրը Շահ թագաւորին պարսից, Մաղրաս, 1780—1783, Վերջաբան:

22 «Աղղարար», 1795, Շամս, էջ 190:

23 «Краткое историческое и географическое описание царства Армянского... изданное Яковом Шамировим...», СПб, 1786 (տե՛ս առաջաբանում. թարգմանիչը՝ Վարլամ Վահանովը, սակայն, որդուն՝ Հակոբ Շահամիրյանին շփոթել է նրա հոր հետ):

ամբողջության մեջ այս տողերի միտքը մեր մատենագրության մեջ համընկնում է լուկ «Յորդորակի» ոգուն: Դա կարծես «Յորդորակի» վերջարանն է: Ուշագրավ է այդտեղ հատկապես ազգից մեկ առաջնորդ դուրս գալու գաղափարը. «Արէ յարեա՞ր ի մէջ ոմն մեզ փրկիչ և կառավարող»: Այս միտքը «Յորդորակում» համարյա նույնությամբ կրկնված է մի քանի անգամ. «Մի՞թէ յառնիցէ որ...» (էջ 17): «...Ել ոչ որ ի մէջ» (էջ 14): «Ելցեն իշխանք ազգին հայոց և ենն իսկ... կամ ո՛ր իցէ, որ վասն ազատութեան ազգին հայոց գուն գործեալ ջանայցէ» (էջ 206): «...որ ո՛ր է իշխան վարեսցի յար...» (էջ 186) և այլն: «Յորդորակի» հեղինակին ճանաչելու նկատառումով ուշագրավ են նաև գրքում առկա մի շարք օժանդակ պարագաներ: Այսպես, օրինակ, գրքի շարադրանքից կրկնվում է, որ նրա հեղինակը ոչ թե տարիքն առած անձնավորություն է, ինչպիսին էր Մովսես Բաղրամյանը, այլ՝ երիտասարդ: «Ասեմք կորովամիտ և խոհեմազարդ եղբարցդ մերոց... արամեան սերնդոց երիտասարդաց և մանկրտեացն...» (էջ 195): Այստեղ հեղինակը եղբայր է համարում երիտասարդներին և մանուկներին, որոնք, ինչպես և ինքը, ունեն կենդանի հայրեր և ավելի ծեր նախորդներ: «Նայեցարուք երիտասարդք հայոց, և տեսէք ըզգուշութիւն հարց և ծերոցն մերոց» (էջ 202): Նրա համար որպես կենդանի ժամանակակիցներ կան եղբայրներ, հայրեր և ծերեր: Պարզ է, որ նա պատկանում է երիտասարդների խմբին, իսկ ինչպես գիտենք, այդպիսին էր ոչ թե Մովսես Բաղրամյանը, այլ Հակոբը, որն այդ տողերը գրելիս (1772-ին)²⁷ 27 տարեկան էր:

Ուշագրավ է նաև հետևյալ փաստը: Գրքի մատնանշված հիշատակարանից բացի, նրանից առաջ, կա մի ուրիշ հիշատակարան՝ դարձյալ ուղղված «առ ընթերցողսն», որտեղ խոսվում է հատկապես տպագրական անհարմարությունների և կամա ու ակամա գործված սխալների մասին: Այստեղից էլ, անուղղակիորեն, կրկնվում է հեղինակի դեմքը: Որ այդ հիշատակարանը ևս գրքի հեղինակին է պատկանում՝ դա պարզ նշմարվում է հետևյալ պարբերությունից. «Քանզի քաջ իսկ գիտեմք մեր ևս, և թէ՛ գոն բազումք ի մերազնեայց, որք թէ՛ կամիցին կարողք են քան զայս լաւագոյնս հնարել...»: Ուստի և ներդրումներն խնդրում է. «Այլ և աղաչեմք.. մի՛ ի ձեր հանդիպելն սմա... ապախտ առնիցէր զաղերսալիր հայցուածս և ըզձակերտեալ վաստակս մեր կրկոց»²⁸:

Մյուս կողմից, պարզվում է նաև, որ այս տողերի և գրքի տերը միաժամանակ տպարանատերն է, որն ինքը՝ Հակոբ Շահաֆիրյանն էր: Այսպես, խոսելով «Ի պակասութենէ կապարեայ գրոցն» և թղթի տարրեր տեսակների վրա գիրքը տպելու մասին, նա ասում է. «Այս ոչ որպէս թէ ի ծախսոն խնայելոյ էղև, զի ոչ գնեցամ զլաւն և զհամեմատն, այլ ի սուղ դուռն թղթոյն յերկրիս»: Նույնն է կրկնում նա նաև արհեստավորների բացակայությունը նշելիս. «Իսկ մի այլ տեղ, անդրադառնալով գրքի վրա թափված ծախսին ու ջանքին, նա գրում է. «Տէր գիտէ, ոչ սակաւ ինչ ծախս աւարաւ, թող զմեր այնքան յարախոնջ տաժանումն»²⁹: Միանգամայն պարզ է, որ այս ամենը կարող էր ասել

²⁷ Որ այդ թվականին է շարագրված գիրքը, կրկնվում է 117-րդ էջի հետևյալ նշումից. «...փրկչին 1373, որ մինչև ցայսօր են ամբ 359» (1373 ± 399 = 1772): Նույնն ենք տեսնում նաև 101-րդ էջում եղած տվյալից. «...մինչև ցայս վայր են ամբ 1221» (1221 ± 551 = 1772):

²⁸ «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ...», Լ. 217:

²⁹ Նույն տեղում:

միմիայն Հակոբ Շահամիրյանը՝ որպես նյութական միջոցների տեր: Նույնն ենք տեսնում նաև հետևյալ տողերից. «Մեր փոխանակ այսորիկ ոչինչ է ձեռն չպահանջեմ, այլ բոլոր ամենայնի ձրի ձեզ բնծայեմ ձեր ազատության ազագալ»²⁷: Այսինքն, գիրքը ձրիարար է բաժանվում ընթերցողին, մի բան, որը կարող էր անել և հայտարարել ոչ թե ընչազուրկ Մովսես Բաղրամյանը, այլ՝ Հակոբ Շահամիրյանը:

Հիշատակարանի այդ մասում մեծ արժեք ունի ևս մի վկայություն, որը ոչ միայն նորից նույնն է ապացուցում, այլ կենսագրական տեղեկություն է տալիս Հակոբ Շահամիրյանի մասին: Գրքի թերթերումները նա պատճառարանում է նաև իր նորավարժ, այսինքն նորավարտ և անփորձ լինելով. «զի ոչ դժբեմք ստորասելն, եթէ դեռակիրթ կար հրահանգեալ ի վարժարանի, կամ որպէս ներկուռ մակացու ի համալսարանի»²⁸: Այն ժամանակ «դեռակիրթ» «հրահանգեալ» կարող էր կոչել իրեն ոչ թե տարիքավոր ուսուցիչ ու «հրահանգիչ» Մովսես Բաղրամյանը, այլ նրա աշակերտը՝ Հակոբ Շահամիրյանը: Մեշ բերված նույն նախադասության երկրորդ մասում հեղինակն ակնարկում է նաև իր նորակիրթ համալսարանական լինելը, ակնարկ, որի վրա ցարգ ուղարկություն չի դարձվել և որը կարող է ուսումնասիրության: Ըստ երևույթի՝ Հակոբ Շահամիրյանը, որպես ունևոր և հայրենասեր ընտանիքի ղավակ, ավարտած է եղել օտար որևէ բարձրագույն ուսումնական դասընթաց: Այս առումով գուցե օգտակար լինի վերհիշել «Յորդորակում» առկա հետևյալ փաստը: Աշխարհագրության բաժնում, Նադիր-Շահի մասին խոսք եղած տեղում, կարգում ենք. «Կայ և ի մէջ եւրոպացւոց գրեցեալ նորին (այսինքն Նադիր Շահի) վարուց պատմութիւն, ողջոյն զնա որոնողեն մարթին հետազօտել ուրանօր են պատմադրեանքն. և մեզ չէ փոյթ առ այս, այլ մեր հետեւսցուք ի կարգս մերոց հետեւանց»²⁹: Հեղինակի ոճից երևում է, որ նա անձամբ ծանոթ լինելով Նադիր Շահի մասին անգլերեն գրված պատմությանը, կարող էր այդ մասին խոսել, գրել, որպես նրա բովանդակությանը ծանոթ անձնավորություն, սակայն դա իր ծրագրից դուրս է համարում: Այդպիսին կարող էր լինել Հակոբ Շահամիրյանը, բայց ոչ Մովսես Բաղրամյանը:

Մատնացույց անենք ևս մի փաստ: Վերևում մեջ բերված հիշատակարանի այն տողերը, որոնք վերված են Հակոբ Շահամիրյանի կողմից և նվիրված են իրենց Նոր Զուղայից Հնդկաստան գաղթելուն, սերտ կապ ունեն գրքի 188—189-րդ էջերի հետ և ցույց են տալիս, որ նրանց հեղինակը նույն անձնավորությունն է, այսինքն՝ Հակոբ Շահամիրյանը: Պետք է, սակայն, նշել, որ այդ դեպքերի մանրամասնությունները նա շարադրել է ուրիշների, հավանաբար, իր հոր և մյուս հայրենակիցների³⁰ տված տեղեկությունների հիման վրա: Նույնը պիտի ասել նաև Վարարադի մելիքների մասին գրքում առկա տողերի վերաբերյալ, որոնց համար սկզբնաղբյուր կարող էին լինել և՛ Մովսես Բաղրամյանը, և՛ ուրիշները:

²⁷ «Նոր տեսրակ, որ կոչի Յորդորակ...», էջ 217:

²⁸ Նույն տեղում, էջ 216:

²⁹ Նույն տեղում, էջ 122—123:

³⁰ Սրինակ, կվորենց սարգարի պատմությունը («Յորդորակ», էջ 190) կարող էր, առաջին հերթին, լսած լինել նրա որդուց («Պարոն Ոհանէս որպի Մարգարի Լոուորենց կոչեցնույ» — Տէս «Պատմութիւն վարուցն... Նադիր Շահ թագաւորին...», վերաբան—հիշատակարանում):

Որոշ մասնագետներ, ոգևորված Միմենոն Երևանցու հիշատակարանով, ակնարկում են, թե Հակոբ Շահամիրյանը, երիտասարդ լինելով, չէր կարող հեղինակ լինել, սակայն մենք դա միանգամայն քմահաճ պնդում համարելով, ավելորդ ենք գտնում վկայակոչել բազմաթիվ օրինակներ, որոնք հակառակը կապացուցեին:

Մեր եզրակացությունը պարզ է: Փաստերը խոսում են այն մասին, որ «Յորդորակի» հեղինակը ոչ թե Մովսես Բաղրամյանն է, այլ Հակոբ Շահամիրյանը:

Մի ամառական պետք է ընդգծել, որ այդ գրքում գրսևորված գաղափարներն ու քաղաքական ծրագրերը լուրջ Հակոբ Շահամիրյանի ուղեղի արդյունքը չէին: Գրանք, ամենից առաջ, պատկանում էին մի խումբ հանրահռչակ գործիչների (Շահամիր Շահամիրյան, Հովսեփ Էմին, Մովսես Բաղրամյան և ուրիշներ), որոնց միջավայրում ու ձևերի տակ էլ աճեց, զարգացավ Հակոբ Շահամիրյանը: Հատկապես Մովսես Բաղրամյանն այդ գործում, ինչպես և նրա ընդհանուր հայագիտական կրթության հարցում, անկասկած, վիթխարի գեր է կատարել:

Գտնվելով ընդհանուր զարգացման և հայրենասիրական գործունեության համար նպաստավոր պայմաններում, երիտասարդ հեղինակը, սոգորված վեհ և պատակներով, իր ամբողջ կյանքն էլ ի գործ գրել, որպեսզի իր անհուն խանդավառությամբ բոլորքի հայ պատանիների ու երիտասարդների սրտերը: Հնդկահայ գործիչների խմբից, որպես երիտասարդ, միևյան նա էր, որ ամենից հարմար թեկնածուն էր պառանդներին ու երիտասարդներին հորդոր կարգալու:

Մնում է էլ ավելի հանգամանորեն ուսումնասիրել եղած փաստերը և ըստ արժանվույն գնահատել Հակոբ Շահամիրյանի կյանքն ու գործը:

КТО ЯВЛЯЕТСЯ АВТОРОМ «НОВОЙ ТЕТРАДИ»?

А. Ш. МНАЦАКАНЯН

(Резюме)

В 1773 г. в Мадрасе (Индия) вышло в свет известное в истории армянского освободительного движения произведение под названием «Новая тетрадь» («Նոր տետրակ, որ կորչի Յորդորակ...»), автором которого принято считать Мовсеса Баграмяна. На самом деле автором этой книги является (как и полагали вначале) Акоп Шаамирян.

В конце книги очень ясно и подробно указано, что ее автор — Акоп Шаамирян, Баграмян же упоминается как учитель Шаамиряна и как его помощник при печатании книги. Кроме того, в одной из глав произведения обнаружен акростих, который сложен из букв имени и фамилии автора и гласит: «От Акопа Шаамиряна». Сохранились также свидетельства современников (Егиазара Шаамиряна, Акопа Симеоняна-Аюбяна и других), согласно которым автором указанной книги является Акоп Шаамирян. Что касается аргументации ряда специалистов в пользу Мовсеса Баграмяна, то они сделаны без достаточного фактического основания.